




ԴՈՒՏ. Մ. ՌՈՋԵՆ

(Ռուսիական ժողովրդական Ռեսպուբլիկայի)
Մեծ Ռաբբի)

ԹԱՓՎԱԾ ԱՐՅԱՆ ՁԱՅՆԸ

... Պատմության հովիտների երկայնքով հոսում են արյան գետակներ: Վայրագ հեղեղը բազում անգամներ սպառնացել է խեղդամահ անել ողջ մարդկությունը: Իր ճանապարհին այդ հեղեղը ջնջել, ոչնչացրել է քաղաքակրթություններ, մշակույթներ, մարդկային ծաղկուն հաստատություններ: Ատելություն ջրհեղեղը միայն նույն ժամանակաշրջանում չէ որ խուժել է այս աշխարհի վրա՝ այն հիմնահատակ կործանելու համար:

... Սակայն միշտ էլ եղել են ժամանակներ, երբ հեղեղների մոլեգնությունը հանդարտվել է, և ջրերն սկսել են ետ քաշվել: Լուսաբացին երևացել են Արարատի բյուրեղյա լեռնագագաթները՝ ավետելով աղետի վախճանը: Այդ լեռնագագաթների վերևում ձիթենու ճյուղը կրող մաքրաթե աղավնին թափահարել է իր ձյունասպիտակ թևիկները: Երկնքի ճակատը պայծառացել է, և ցրվող ամպերի միջից իր երփնագեղ կամարն է կապել հույսի ծիածանը:

... Արարատի բարձունքներին է, որ դրոշմված է եղել այս հրաշալի պատկերը, որը մինչև Պիկասոյի ժամանակները երկարող մարդկությանը տևապես ցույց է տվել խորհրդանշանն իր իսկ ցանկությունների՝ հաղթել մահվան ուժերին, անընդհատ պայքարել, նվաճելու համար մարդկային իդեալների վսեմագույնը՝ խաղաղությունը:

... Պատմությունը իր տարօրինակ հեղություններն ունի: Արդարև, մի ժողովուրդ, որն իր հազարամյա գոյությունը անց է կացրել մարդկային առաջին մեծ աղետը հիշեցնող աստվածաշնչական այդ հողերի վրա, հենց ինքը՝ նույն այդ ժողովուրդն էր, որ ճակատագրվեց կրելու կես դար առաջ պատերազմի աստված անկուշտ Մոդոբի կողմից շղթայագերծված ժամանակակից ջրհեղեղի դժոխսային դառնագույն շարշարանքները:

Մենք երբեք չենք կարող մոռանալ Ֆրանց Վերֆելի անմահ երկի՝ «Մուսա լեռան քառասուն օրը» գրքի սարսաղղեցիկ էջերը, ուր աշխարհի ժողովուրդներին պատմվում է խաղաղասեր ու ժրաշան հայ ժողովրդի կրած անհուն ողբերգության մասին: Ազգության մահա Վերֆելը միլիոնավոր հերոսների այդ ողբերգությանը մոտեցավ ա՛յն մարդու վշտով և ընդվզումով, որի նախնիները ահա հազարավոր տարիներից ի վեր հազար անգամ գրել են իրենց նմանը չունեցող մարտիրոսագրության էջեր: Վերֆելի վիպում ղգացվում է տառապանքի մեջ գտնվող եղբոր հետ բացարձակ նույնացում, աստվածաշնչական ծանոթ խոսքի կատարումը. «Եղբարք ի վիշտս եղիցին քեզ պիտոյ, դի վասն այնորիկ իսկ ծնանին» (Առակք, Ժէ 17): Մեր եղբայրությունը ծնունդ է առել մեր երկու ժողովուրդների ճակատագրի նույնությունից:

և այն դառն ու անհնարին տանջանքներից, որ մենք քամել ենք նույն բաժակից: Չպետք է մոռանալ, որ Վերֆելը իր վերոհիշյալ գիրքը գրել էր այն ժամանակ, երբ երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում ֆաշիզմի կողմից բնաջնջված վեց միլիոն հրեաների տառապալից Գոլգոթան դեռևս սկսված չէր:

... Վաղեմի մի ավանդության համաձայն, Աստված երկնքում հավաքում է մարդկանց արցունքները և պահում մի բաժակում: Ո՛չ մի արցունք, արյան ո՛չ մի կաթիլ իզուր չի թափվում: Արցունքներով լի այդ բաժակը մնում է Տիրոջ աջ կողմում, որպես ապացույց մարդկային տանջանքների և որպես մի ազդարարություն ուղղված բոլոր նրանց, ովքեր կհամարձակվեն նորանոր տառապանքների ծնունդ տալ այս աշխարհում:

Այդ բաժակում իրար են խառնված ձեր, ինչպես և մեր արցունքները, այրիացած կանանց և որբերի արցունքները, այն ծնողների արցունքները, որոնք կորցրել են իրենց աչքերի լույսը՝ իրենց զավակներին, մեկ խոսքով՝ բոլոր նրանց արցունքները, ովքեր բարարոսության զոհերն են եղել:

Արյան հեղեղներ են հոսում պատմության հովիտների երկայնքով: Դա մեր թափած արյունն է, ինչպես և ձերը, դա Մուսա լեռան և Աուզվիցի մարտիրոսների արյունն է: Դա հայ ժողովրդի ազատության համար զոհված հերոսների, ինչպես նաև Վարչավայի գետտոյի մարտիկների թափած արյունն է:

Այն պահին, երբ մենք նշում ենք հայ ժողովրդի մեծ եղեռնի հիսուն տարին և միաժամանակ վերհիշում, թե երկու տասնամյակներ են անցել հրեա ժողովրդի վրա գործադրված մեծ ոճրի թվականից, մեր աչքերը նորից են ուղղվում դեպի Արարատի լեռնագագաթները, այն ոգեկան Արարատի, որը խորհրդանշում է ջրհեղեղի վախճանը, և ապագայի հորիզոնում մի անգամ ևս հայտնվում է խաղաղության ազավինին, որը մեր հույսերն առաջնորդում է դեպի մի աշխարհ՝ առանց արցունքների և առանց արյան:

Թո՛ղ հավերժ օրհնյալ լինի հայ ժողովրդի սուրբ մարտիրոսների հիշատակը:

12 հունվարի 1965 թ.

Բուխարեստ

